ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ЦЕНТРАЛЬНАЯ КОМИССИЯ
ПРАВИТЕЛЬСТВА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ПО ГУМАНИТАРНОЙ ПОМОЩИ

CENTRAL COMMISSION ON HUMANITARIAN
ASSISTANCE OF THE GOVERMENT
OF THE REPUBLIC OF ARMENIA

Երևան-10, Հանրապետության հր., Կառավարական տուն
Հեռ. 525832, 528753, Fax. 528572, E-meil. hac@gov.am

«08» 06 2001թ. No 177-358

Հայաստանի Հանրապետությունում մարդասիրական
օգնության և բարեգործական ծրագրեր
իրականացնող կազմակերպություններին

Բարեգործական կազմակերպությունների կողմից բեռների ներմուծման և բաշխման ծրագրերի վերաբերյալ ՀՀ կառավարության մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող հայտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայտերում ոչ միշտ են ներկայացվում բավարար տեղեկություններ բեռների պարունակության և բաշխման ծրագրի մանրամասների մասին: Անհրաժեշտ տեղեկությունները ժամանակին և պահանջվող ծավալով չներկայացվելու հետևանքով ձգձգվում է հանձնաժողովի կողմից առանձին հայտերի վերաբերյալ որոշման ընդունման գործընթացը:

Բացի դրանից, մի շարք կազմակերպությունների կողմից սահմանված ժամկետներում և պահանջվող ծավալով չեն ներկայացվում ՀՀ կառավարության 2000թ. սեպտեմբերի 28-ի N 594 որոշմամբ սահմանված ծրագրերի կատարման ընթացքի մասին եռամսյակային և ամփոփ տեղեկությունները:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, ինչպես նաև բարեգործական բեռների ներմուծման և բաշխման գործընթացը կանոնակարգելու նպատակով առաջարկում ենք ՀՀ կառավարության մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժողով ներկայացվող հայտերում մանրամասն և սպառիչ տեղեկություններ ներկայացնել

- ներմուծվող բեռների պարունակության,
- շահառուների ընտրության,
- ծրագրի իրականացման ժամկետների,
- կազմակերպություններում բեռների մուտքագրման և հաշվառման,
- բաշխման գործընթացի վերահսկման,
- ծրագրի իրականացման ընթացքում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության և ծրագրի իրականացման հետ կապված այլ հարցերի վերաբերյալ:

Նշված հարցերի մասին հայտում սպառիչ տեղեկությունների բացակայության դեպքում հանձնաժողովը հնարավորություն չի ունենա որոշում ընդունել ծրագիրը որակելու մասին:

Հարկ ենք համարում նշել, որ հանձնաժողովի կողմից որակված ծրագրերի իրականացման մասին եռամսյակային և ամփոփ տեղեկություններն պետք է ներկայացնել սահմանված ժամկետներում: Այդ կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում հիշեցնել, որ ՀՀ կառավարության 2000թ. սեպտեմբերի 28-ի N594 որոշման 6-րդ կետով սահմանված է, որ նշված տեղեկությունները չտրամադրելու կամ ծրագրի նպատակները չիրականացվելու դեպքում ՀՀ կառավարության մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժողովն իրավասու է փոփոխելու կամ կասեցնելու ծրագիրը մարդասիրական օգնության կամ բարեգործական որակելու մասին իր որոշումը:

ՀՀ կառավարության մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժողովի անունից հայտնում եմ մեր պատրաստակամությունը նպատակային և արդյունավետ բարեգործական ծրագրերի իրականացման նպատակով Ձեր կազմակերպության հետ համագործակցելու հարցում:

ՆԱԽԱԳԱՀ Վ. ՄՈՎՍԻՍՅԱՆ